

ԿԱՆՈՆԱԳԻՐ



ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ԾՆՈՂԱՑ
ՀԱՆԴԷՊ ԻՐԵՆՑ ՈՒՍԱՆՈՂ-ՉԱԻԱԿԱՑ




1925

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄՆՊ

- ԳԱԶԻՐԷ -




ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ԾՆՈՂԱՑ
ՀԱՆԴԷՊ ԻՐԵՆՑ ՈՒՍԱՆՈՂ-ՋԱԻԱԿԱՑ



Կարևոր հարցեր

1925

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ազնիւ Մ'նո՛ղ,

Սիրատուն զաւելիք սիրոյն և անոր վրայ դրած յոյսերուդ պսակումին համար է որ դժած եմ ներկայ կանոնադիրս, զոր կը մատուցանեմ քեզ 'ի նուէր: Թող համեստօրէն զարդարէ՛ անիկա տանդ անկիւններէն մին, և թող վերածէ՛ զայն նուիրական խորանի մը, ուր գնա՛ երբեմն ինքնամփոփուելու, իրրեւ ծնող ստանձնած պարտականութիւններուդ և պատասխանատուութիւններուդ խորհուրդին մէջ: Այդ խորհուրդին ծոցէն քաղցրօրէն բարձրացող ներշնչումը, վստահ եմ որ պիտի վերացնէ քեզ ծնողական կոչումիդ բարձրութեանը և պիտի ներազդէ քեզ գիտակցութիւն և քաջութիւն, կատարելու զայն հեշտիւ և սիրով:

50

ՍԿՁԲՈՒՆՔ ՄԸ

Սիրելի Ծնո՛ղ,

Զաւկիդ նայէ՛ իբրեւ հրաշագան արժէքներ, գեղեցկութիւններ և մեծութիւններ պարուքող կարելիութեան մը, կարելիութիւն՝ որ իբրեւ փայլուն իրականութիւն երեւան պիտի գայ շնորհիւ իրեն տրուած և տրուելիք կրթութեան և դաստիարակութեան:

Ուրեմն, իր մանկական ազմկալից ներկայութենէն ազատելու համար մի՛ առաջնորդեր զայն գոպոց, այլ հոն, հոգիներու մշակումի այդ անդաստանին մէջ, ենթարկել տալու համար այն խնամքներուն և հոգածութիւններուն, որոնք նպատակ ունին յայտնութիւնը վերոյիշեալ կարելիութեան, և անոր շնորհիւ գոյառութիւնը երազական այն էակին՝ զոր կ'ընդնշմարեն սիրոյ աչքերդ գաւկիդ ապագայի խորհուրդին մէջ:

ԻՐՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Յարգելի Ծնող,

Ձառակդ կրթարան առաջնորդելէ և զինք հոգեւոր ծնողներու խնամքին յանձնելէ առաջ, պարտ է քեզ և բարի, յիշել թէ, դո՛ւն էիր պատճառը անոր գոյութեան և դո՛ւն ես պատասխանատուն անոր վիճակին այնպէս՝ ինչպէս կը ներկայանայ այդ վայրկեանին: Այո՛, սիրելի ծնող, դո՛ւն էիր որ ծնար զայն բարի կամ չար, սղեղ կամ գեղանի, ուշիմ կամ ապուշ, առողջ կամ տկար: Դո՛ւն ես որ մեծցուցիր զայն կարող կամ անկար, առաքինի կամ մոլի, ճարտար կամ ապիկար: Դո՛ւն մշակեցիր իր մէջ նորածիլ այն յատկութիւնները որոնք կը կազմեն իր ներկայ վիճակն ու նկարագիրը:

Պատասխանատուութեան այս զգացումով համակուած մօտեցիր սեմին նուիրական այն տաճարին՝ ուր պիտի առաջնորդես զառակդ դեղեցիկ ու ներդաշնակ աճումի յոյսով և բարոյական վերածնունդի մը վստահութեամբ: Հո՛ն, քու սուած նիւթդ է որ պիտի մշակուի և քու սկսած գործդ է որ պիտի շարունակուի: Երբ որ մը փորձես գնահատել հոն կատարուած աշխատութեան բնոյթն ու արժէքը, Դո՛ւն յաճածի՛ր բաժինը անաւոր և խորհրդաւոր այս պատասխանատուութեանդ:

Դ Ա Ս Մ Ը


Բարի Մ'նո'ղ,

Մ'նողական պատասխանատուութեանդ ծանրածանր այս բեռը մի՛ վար դներ կրթարանի սեմինն առջեւ, զի առաջին դաստիարակի գործդ և ազդեցութիւնդ հոն չի վերջանար: Առանց հաշուի և նկատի առնելու, այդ սեմէն ներս նոյնիսկ տարածուող ազդեցութեանդ պարագաները, խորհէ թէ, ուսանող զաւակդ քու շունչիդ և նայուածքիդ տակն է որ կ'անցնէ օրուան կարեւոր մէկ մասը: Առաւօտուն, առաջին թարմ տպաւորութիւններու դրօշմը քեզմէ առած՝ երեկոյնի դարձեալ քեզ կը վերադառնայ կնքելու համար զանոնք քու խօսքովդ և խորհուրդովդ:

Ընդունի՛ր ուրեմն, սիրելի ծնո'ղ, թէ ուսանող-զակիդ կրթութեան և դաստիարակութեան գործին հանդէպ կը շարունակես մնալ պարտական և պատասխանատու իբրև բնական գործակիցը դաստիարակներուս: Որպէս զի անխուսափելի սոյն գործակցութիւնդ լինի օգտակար և արդիւնաւոր գործին համար, որ զաւկիդ բազդին և ապագային և քու փառքիդ ու երջանկութեանդ գործն է կենսական, հարկ է որ ստեղծուի տանդ և դպրոցին, հոգեւոր և մարմնաւոր ծնողներուս միջեւ ըսել կ'ուզեմ, խորհուրդի և գործելակերպի գեղեցիկ ներդաշնակութիւն մը:

Ահա՛, 'ի ստորեւ, այդ ներդաշնակութեան գլխաւոր նօթերէն մի քանին: Զերմօրէն պիտի խնդրէի որ սերտէիր զանոնք լրջօրէն և անոնց համեմատ լարէիր զակիդ կեանքը տունէն ներս, որպէս զի վայելէիր քաղցրութիւնը անոր աշխատութեան գեղեցիկ երգին՝ որ օր մը երգը պիտի ըլլայ քու և անոր երջանկութեան և փառքին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԸ



Ա.

Իմաստուն Մն'ող,

Ուսանող-զաւկիդ հոգւոյն ներգործած սպաւորու-
թիւններէդ առաջինը և է՛ն ներոյժը սա թող ըլլայ, թէ,
կեանքը նպատակ մ'ունի՝ զոր պէտք է նանչնալ, որուն
համար պէտք է պատրաստուիլ և զոր հուսկ ուրեմն պէտք
է ապրիլ: Յար յիշեցո՛ւր իրեն, լո՛ւրեալն կամ՝ բարձրա-
ձայն թէ այդ նպատակի ճանաչումին, պատրաստութեան
և ապրումին է որ կ'աշակերտի 'ի կրթարան:

* * *

Կեանքի նպատակին ճանաչումը, պատրաստութիւնն
ու ապրումը, ի մէջ այլոց կը պարտադրեն շափ ու կա-
նոն կեանքի մեջ: Չափը և կանոնն են որ կը պահեն
կեանքը և անոր շարժումը նպատակի ճամբուն մէջ ան-
շեղ ու անսայթաք: Անոնք են որ կ'ապահովեն այդ շար-
ժումին բնականոն ընթացքը և կ'երաշխսուորեն յաջո-
ղութիւնը:

Դպրոցը չափով ու կանոնով կարգադրած է զաւկիդ
կեանքը, նո՛յնպէս լարէ՝ և դուն զայն տունէն ներս:
Չափի և կանոնի ենթարկէ իր ճաշն ու հանգիստը, քունն
ու արթնութիւնը, զբօսանքն ու աշխատութիւնը, մուտ-
քըն ու ելքը. մէկ խօսքով իր սմբողջ կացն ու կեն-
ցադր:

Չափ ու կանոն կեանքէդ բղխած մանաւանդ, գե-
րազանցօրէն խօսուն զասն է, զոր ո՛չ մի խորհուրդ և
խրատ, հրաման կամ հրահանգ կրնան փոխարինել:

Կոկիկ և կարգապահ Յնո՛ղ ,

Չափով ու կանոնով լարուած կեանքը ուսանող-զաւ-
կիդ, թող թաւալի կարգ ու կանոնաւորութեամբ յարգար-
ուած սիրուն և կոկիկ շրջապատի մը մէջ զոր պէտք է
ներկայացնէ տունդ: Չեմ բսեր ճոխ ու փայլուն շրջապատ,
զի այդ յաճախ դժուարին է և անպէտ, այլ կ'ըսեսմ կոկիկ
և վայելուչ, զի այս վերջնոյն մէջն է ճշմարիտ, տը-
պաւորիչ և անայլայլ գեղեցկութիւնը, և այդ՝ մեզմէ
եւթ կախեալ:

Ուրեմն վայելչօրէն զարգարուած և կարգ ու կա-
նոնաւորութեամբ յարգարուած տանդ մէջ աշխատող
զաւակէդ պահանջէ, նստակ, կոկիկութիւն, կարգապա-
հութիւն, խնամք և հոգածութիւն, իր հագուստին ու
կապուստին, դպրոցական գոյքերուն և առարկաներուն
գործածութեան, պահպանումին և տեղաւորումին մէջ:
Մի՛ ներեր իրեն ո՛րէէ շփոթութիւն, խանգարում և
թափթփածութիւն: Այսօր գործին և գոյքերուն՝ իսկ վա-
ղը կրնայ կեանքին մէջ ըլլալ անկարգ ու թափթփած:

Պարտաճանձի՛չ Օ՛նսիլ ,

Հե՛տաբխիւր եղի՛ր ուսանող գաւկիղ ըսածին և ընե-
 իփին: Ամէն օր դէթ քանի մը վայրկեան նուիրիր իրեն
 չբազումէդ և ժամանակէդ: Սա իր անկապտելի իրա-
 ւունքը՝ և քու անխուսափելի պարտականութիւնդ է:
 Յամէն օր քննէ՛ և տես, թէ ան ինչպէ՛ս կը հիւսէ իր
 և քու բազղոյ, ինչպէ՛ս կը կերտէ իր և քու ճակատա-
 դիրոյ: Հետաքրքրութիւնդ, վստահ եղիր, պիտի խթանէ
 զինք և ուրախացնէ, մինչ անտարբերութիւնդ կրնայ
 թուլացնել զինք և մտորեցնել:

Բարի սովորութիւններէդ մին ըլլայ քաղցրօրէն
 յորդորել զինք պատրաստուելու վաղուան գործին, միշտ
 ուշադիր՝ որպէս զի այդ պատրաստութեան մէջ ՚ի հան-
 դէս բերէ ա՛յնքան ուշիմութիւն՝ որքան կարգ, ա՛յնքան
 դատողութիւն՝ որքան կանոն, և ա՛յնքան ճաշակ՝ որ-
 քան մաքրութիւն: Այս պղտիկ ու փանաքի կարծուած
 յատկութիւններն են որ կը ծնին մտքի և սրտի մեծ կա-
 րողութիւններ և կեանքը կը պսակին յաջողութիւննե-
 րով:

9/12

Աչալուրջ Ծնո՛ղ ,

Արթուն հսկիր ուսանող-ղաւկիդ բնկերական եւ բա-
 թեկամական յարաբերութիւններուն, Ինչպէս գիտես,
 ընկեր եւ բարեկամն են որ յաճախ կը շինեն կամ կը
 քանդեն կեանք եւ նկարագիր : Տո՛ւր իրեն ընկեր, զի ա-
 նիմաստ, անօգուտ եւ անբնական է առանձնական
 կեանքը, բայց ընտրիր զայն բժախնդրօրէն, նկարագրով
 ազնիւ, ձգտումով առողջ եւ ընտանեկան կրթութեամբ
 ազնուական տղաքներէ : Քաջ գիտցիր որ ինձմէ եւ քեզ-
 մէ աւելի անոնց ազդեցութիւնն է իրական եւ խօսուն
 իր մատաղ հոգւոյն :

Սկզբունք ըրէ՛ քեզ, սա չար ժամանակներում մա-
 նաւանդ, չը վստահիլ զաւակդ ո՛չ բարեկամի, ոչ դրա-
 ցիի եւ ո՛չ ծանօթի : Թոյլ մի տար երբեք որ դեգերի ան
 դէս ու դէն, փողոցները եւ այլոց տուները : Վստահ ե-
 զիր, շատ անգամ այն տեղերը կը թօթափէ ինչ որ տը-
 ւիր իրեն եւ տուինք իբրեւ շնորհք եւ սրբութիւն, փո-
 խարէն զգենլով ազտ ու ապականութիւն : Զաւակիդ բա-
 րօյական ազնուականութիւնը գերադասէ մտքի եւ ֆի-
 զիքի ամէն շնորհքներու, եւ անոր շինութեան եւ պահ-
 պանումին հսկիր աններող նախանձախնդրութեամբ եւ
 անվստահ զգուշաւորութեամբ :

Սրբակեաց Ծնո՛ղ ,

Ուսանող-դաւակդ բացարձակապէս հեռու պահե ,
չափահասներու եւ խելահասներու միայն վերապահուած
զբօսավայրերէ, թատրոն ըլլան անոնք թէ սինէմա , ա-
կումբ թէ երեկոյթ : Առաւել կամ նուազ կրթիչ և բա-
րոյացուցիչ այդ վայրերը թող յաճախեն ապա-
գային, երբ ըլլան մտքով աւելի խելահաս, զգացումով
աւելի հասուն, ճաշակով աւելի նուրբ և հոգւով աւելի
գիտակից, մէկ խօսքով երբոր ըլլան ի վիճակի դատո-
րեչելու բարին՝ չարէն, տղեղը՝ գեղեցիկէն, պարկեշտը՝
անբարոյականէն և ազնիւը՝ գոեհիկէն :

Առայժմ թող բաւականանան ընտանեկան ասողջ և
մաքուր ժամանցներով , և բաց օդին կատարուած պը-
տոյտ և խաղերով : Ո՛հ , բնութեան ծոցը թող ըլլայ
ընտրելագոյն միջավայրը՝ որ պէտք է օրրէ իրենց ման-
կութեան բոլոր շարժումները , յուզումները և խորհուրդ-
ները : Հոն ամէն բան մեծ է և մեծցնող , բարձր է և
բարձրացնող , խոր է և ներչնչող , ապաւորիչ և թե-
լադրող :

Սորվեցուր իրեն այժմէն իմաստը խաղին և արժէ-
քը ժամանցին , և տեղն ու ժամանակը անոնց. մի գու-
ցէ թելադրուի և վարակուի օրինակէն այն անձերուն ու-
րոնց համար կեանքն ամբողջ խաղ է և հաճոյք , զբօ-
սանք է և ժամանց :

Բարեպաշտ Թ'նո՛ղ ,

Վերոյիշեալ փորձութեան վայրերէն հեռու՝ բայց ուսանող-զաւակդ մօտը պահե Ասուծոյ Տաճարին , անոր օրհնեալ ու խնկաւէտ հովանին թող տարածի և պատէ ծաղիկ ու մատղաշ հասակն անոր :

Հաւատքի սանսր սրով օժտուած է ամէնուս հոգին , պէտք է մշակուի և արթննայ մեր մէջ , ինչպէս կը մշակուին մեր ֆիզիքական , բարոյական և մտաւորական այլ կարողութիւնները , որպէսզի լաւագոյնս ըզգանք և իմանանք , խորհուրդին գիտութիւնը՝ որ կրօնքով կը ներկայանայ : Խոպան հոգիներու գրծումներէն մի պայթակցիր , մարդկային հոգւոյն ազնուագոյն բնագոյովը , և է՛ն հզօր , իմաստուն և կենսունակ ազգերու հանգիստագրած օրինակներու թեղադրութեամբը խոնարհէ՛ ամենակալ Աստուծոյ գոյութեան հանգէպ և շատ կանուխէն ներշնչէ զաւկիդ երկիւղած պաշտամունքն Անոր : Թող տեսնէ , ճանչնայ և սիրէ Ազրիւրն ու Վախճանը գոյութեանց , և Անոր Սիրովը , Կամքովը , Իմաստութեամբը , ինչպէս նաև Վախովը ներշնչուի իր բոլոր խորհուրդներուն , զգացումներուն և գործերուն մէջ : Ծշմարիտ հաւատքի հիման վրայ բարձրացած շէնքն է միայն ամուր , գեղեցիկ և հոյակապ , և յաւէրժական գրօշմովը փառաւոր և պատկառելի :

Անստոյգ և անկայուն կեանքի փորձանաւոր գիմայեղումներուն մէջ մանաւանդ ի յայտ կուգայ հաւատքի արժէքը և իրականութիւնը : Խեղամուտ եղի՛ր հաւատքի այս ճշմարտութեան և այժմէն շնորհազարգէ զաւկիդ հոգին անոր անայլայլ մխիթարութեան և անյողգողգ զօրութեան անգին գրաւականովը :

Բանխմաց և փափկանկատ Ծ'նո'ղ ,

Հեռու պահե՛ք ուսանող-ղաւակիք , նաև մեծերու ներ-
քին կեանքէն ու մտերիմ կենցաղէն : Պահէ՛՛ զայն , որ-
քան կարելի է , մանկական և պատանեկան աշխարհի
պարզութեան և անմեղութեան մէջ : Կուսական կեանք
եւ նուրբ , ոչ միայն մաքուր են և գեղեցիկ , այլ առողջ
են և զօրաւոր՝ կարենալ սնուցանելու և աճեցնելու
համար ապագայ մարդը կատարեալ : Վաղածամ արթ-
նութիւն կը վտանգէ այն աճումին՝ որ պէտք է ըլլայ
աստիճանական , խաղաղ և բնականոն : Ինչպէս ամեն
բանի մէջ , հոս ալ աճապարանքը ապարդիւն է և վնասա-
կար : Մի կանխէր բնութիւնը որ կը հակէ արթնուն , կը
պատրաստուի եւ պիտի արթննայ ու խօսի զաւկիդ մէջ
իր ժամանակին :

Այս մասին , բնական պատճառներուն առընթեր տես
եւ յարգէ բարոյականն ալ : Ո՛չ կանուխ եւ ո՛չ ուշ , մի
ցանկար որ գաւակիդ տեսնէ ամէն բան քօղազերծ եւ
մերկապարանոց : Կան բաներ , անշուշտ բարոյական մար-
դի մէջ , որոնց խորհուրդը , գեղեցկութիւն է , հրապոյր եւ
բանաստեղծութիւն : Խորհուրդի այդ քօղը մի՛ վեր առ-
ներ հեթանոսօրէն , հանդիսադրելու համար անսքօղ մեր-
կութիւններ : Այդպիսի խորհուրդներու իրականութեան
թափանցելու զգայարանքը աչքը չէ միայն : Զաւակդ
թող ամէն բան չի տեսնէ եւ գիտնայ , այլ աշխատի եր-
բեմն զգալ ու զուշակել :

Բարեկիրթ Ծնո՛ղ,

Ձաւակդ ի մանուկ տիոց վարժեցուր յարգանքի եւ պատկառակի հանդէպ օրէնքի եւ մեծութիւններու, հանդէպ սրբութիւններու եւ պարտականութիւններու : Զգոյ՛ջ եղիր իր ներկայութեան արտասանելէ ո՛ր եւ է ծանրը, անուանարկիչ, անպատշաճ եւ վիրաւորիչ խօսք՝ իր եւ քու մեծերուդ հասցէին, իր եւ քու պաշտամունքիդ առարկաներուն : Այսօր թեթեւ եւ անպատկառ այլոց հանդէպ՝ վաղը կրնայ նոյնը ըլլալ իր անձին եւ քեզ հանդէպ : Լրջութիւն, սրբութիւն, յարգանք եւ պատկառանք հիմնական յատկութիւնները թող ըլլան իր սրբտին, մտքին եւ հոգւոյն :

Դպրոցն ու դաստիարակը մանաւանդ, ցո՛յց տուր իրեն, իրենց բովանդակ մեծութեանը եւ վսեմութեանը մէջ : Իր մանկական երեւակայութեան թող խօսին անոնք իբրեւ իսպառ պատկերներ : Դպրոցին թող նայի, իբրեւ դերագոյնին տաճարներուն՝ ուր հոգիներու կերտումին եւ ճակատագիրներու դարբնումին հրաշքը տեղի կ'ունենայ : Ուսուցիչներուն թող նայի, իբրեւ հրաշագործ վարպետի՝ որ Աստուածայնօրէն կը շինէ կը վերանորոգէ եւ կը վերստեղծէ, եւ որ հայրօրէն կը վերածնի, կը խնամէ եւ կ'առաջնորդէ :

Խոհեմագարդ Մհո՛ղ ,

Կանոնաւոր եւ սեւակամ յարաբերութեան մեջ եղիւ զաւելիդ զպրոցին եւ զասիւրաւիներուն հետ: Իր մասին խօսէ անոնց հետ, ըսէ եւ լսէ, որպէսզի միասին կատարուած գործը չ'ընդհատի, չ'աւազի, չը թիւրի, մէկ խօսքով, անայլայլ մնայ ներդաշնակութիւնը որ պէտք է հսկէ տան եւ զպրոցի յարաբերութեան:

Տեղի ունեցած ուէ գէպքի կամ միջադէպի առթիւ սկզբունք ըրէ քեզ, անխախտ պահել հաւատքդ հանգէպ կրթարանին՝ եւ ըլլալ վերապահ զաւելիդ մասին: Զայդ պէտք է պարտադրէ քեզ մանաւանդ զաւելիդ մանկական միամտութիւնը, թերի գատողութիւնը, եւ իր տարիքին եւ զիրքին յատուկ միտումները եւ մոլութիւնները:

Որդեսէր Ծնող ,

Ծնողական սերդ բող ըլլայ խոր եւ զօրաւոր բայց գիտակի՛ց եւ բանաւոր : Արգելք թող չըլլայ այն տեսնելու զաւակդ այնպէս ինչպէս որ է : Կաւ դիտէ զայն եւ ճիշդ գատէ , ո՛չ հրեօ է եւ ոչ հրեօՏակ , այլ ընդունակ ըլլալու մի՛ն եւ մուսր : Այո՛ , կրնայ ըլլալ հրեշտակ , եթէ համաձայն եւ համախոհ մեզի հետ իմաստութեամբ խնամես , ինչ որ դրած են իր մէջ գեղեցիկ , առողջ , ազնիւ եւ լուսաւոր , Աստուած եւ բնութիւն : Բայց եւ կրնայ հրէշ ըլլալ , եթէ կուրօրէն նայիս իր թերութիւններուն եւ արդարութեամբ չի զատես իր տկարութիւնները որ մասը կը կազմեն իր բնութեան :

Եթէ կ'ուզես օր մը տեսնել զաւակդ զարգարուած հրեշտակային շնորհքներով , մեզի հետ եզիր երբ կ'աշխատինք առաւելու լոյսը իր մտքին , բարութիւնը սրտին եւ ոյժը կորովին : Մեզի հետ եզիր նաեւ երբ պիտի վանենք խաւարը մտքէն , երբ պիտի արմատախիլ հանենք մոլութիւնները սրտէն , եւ պիտի խորտակենք անխընայ բրտութիւնները կամքին : Այո՛ , ձայն տուր մեզ եւ իրաւունք , երբ սանձ կը գնենք իր յոռի ախորժակներուն , երբ կը շղթայենք ապերասան շարժումները եւ սահման կը դնենք իր վայրագ ետի պոռթկումներուն , եւ այս՝ ինչպէս ըսի , որպէսզի յաղթուի հրեօը որ արթուն կը հսկէ , իր մէջ եւ դուրս զայ հրեօՏակը որ ՚ի քուն է ներսիդին :

Իր թեթեւ վիշտերը որոնք յառաջ կուգան մերթ կատարուած պարտականութիւններու դժուարութիւններու

րէն եւ մերթ իր պատժուած թերացումներէն, ո՛հ, թող
չը խոտվեն զքեզ: Անոնք են որ պիտի զօրայնեն եւ
մեծցնեն զինք: Հող չէ՛, թող լա՛յ երբեմն դպրոցին մէջ
եւ դպրոցին պատճառաւ, որպէսզի վերջը խնդայ կեան-
քին մէջ եւ կեանքին համար:

Այսօրուան ժպիտին մէջ արցունք՝ եւ արցունքին
մէջ ժպիտ կայ պահուած, զանոնք տեսնել զիտցիր եւ
զհահատել:

Վարդապատան Ծնո՛ղ

Անուանման հետևեալ եւ վաստակաւ սածիր բնաւ վարժարանիդ հանդեպ : Յեա փորձի եւ քննութեան , զոր իրաւունքդ է կատարել , երբ միանգամ ընտրած ես , ընդունիր զայն ինչպէս որ է : Մի՛ վիճիր իր կարգն ու կանոնը , ընդհակառակը հպատակիր անոնց եւ նոյնը թելադրէ զաւելիդ :

Հայ ծնողք ընդհանրապէս կուրորէն գերի օտար հաստատութիւններուն , բռնակալ են ընդհակառակը եանիրաւ՝ հանդէպ տոհմայիններուն : Ո՛չ կոյր եւ ո՛չ անիրաւ , ո՛չ գերի եւ ո՛չ բռնակալ , այլ հարկ է ըլլալ արթուն եւ արդար , ազատ՝ եւ մանաւանդ կարգապահ , այս է միջին ճամբան , ճամբան խմաստութեան եւ ուղղութեան , որմէ զուրս մանուկներուն շահն է որ կը տուժէ , զաւելիդ ապագան է որ կը թիրի :

Անկարգապահութիւնը , ազբւր մեր անասելի գրգռողութեանց , կը մնայ ցայսօր մին մեր ցեղային աչքառութեան թերութիւններէն , պահենք կարգն ու կանոնը հաստատութիւններու՝ որոնցմէ իրաւամբ կ'սպասենք վերանորոգումը ցեղին՝ արմատական կրթութեամբը նոր սերունդին :

Հայրենասէր Ծնո՛ղ,

Ուրիտէ, յետ այնքանի զոհողութիւններու և յուսախաբութիւններու, հուսկ ուրեմն միտ դնել պապերուդ ձայնին՝ որ կը յորդորէ քեզ չ'վստահիլ օտարին: Այո՛, սիրելի ծնո՛ղ, մատաղատի ուսանող-զաւակդ մանաւանդ, մի՛ վստահիր օտարին: Օտարը ոչինչ կուտայ քեզ առողջ և ազնիւ, տոկուն և տեւական: Իր առաքելութեան նպատակը, խիղճէդ և գիտակցութենէդ ներս, շահածոյ տիրապետութիւն մըն է միայն և ո՛չ անշահախնդիր նուիրում: Չայդ արդէն գիտէի, լաւագոյնս խելամտեցայ իր անհարազատ ձեռքերէն ազատած քանի մը տասնեակներու վրայ կատարած վերջին փորձովս:

Յիշէ՛ պատմութիւնդ, և եթէ չես գիտեր կարդա՛ դայն, սիրելի ծնո՛ղ, պիտի սորվիս թէ օտարը միշտ դաւած է քեզի զէմ և ի գին քաղցր ու սին յոյսերու միայն, որով յաջողած է օրօրել միամիտ հոգիդ, զրկած է քեզ ո՛չ միայն արդար իրաւունքներէդ, այլ արդէն իսկ վայելած համեստ բարիքներդ ալ ձեռքէդ է խլած: Յիշէ թէ ինչպէ՞ս, երէկ տակաւին, ի վաճառ հանեց ինչքդ, պատիւդ, կեանքդ, յոյսերդ, և երջանկութեանդ բոյներէն ներս բռնկցուցած հրդեհէն մազապուր ճողոպրած բեկորներդ, ինչպէ՞ս տարտղնեց դէս ու դէն, մեռելներուդ ափ մը հող, և ողջերուդ բունիկ մ'իսկ զլանալով: Ո՛հ, բիւրաւոր նահաւսակներուդ սիրոյն թոյլ ըլլայ զգուճացիր օտարին: Ունի՛ս արժանաւոր կրթական մշակներ, պատրաստուած քեզ համար, ճամբայ ելած քեզ համար, անոնց կենսատու շունչին և անխարդախ նուիրումին վստահիր սերդ, յոյսդ եւ ապագադ՝ որ զաւակդ է սիրասուն:

Կրթասէր Մնո՛ղ,

Ուսանող զաւելիւ ուսման եւ կրթութեան գինը մ'ի սակարկեք: Տո՛ւր և տրամադրէ՛ անոնց համար լի և առատ: Կրթական տուրքդ թող նուիրումի արժէքը և զոհողութեան վսեմութիւնը ունենայ, զի ա՛ն է որ պիտի փրկէ և ապրեցնէ:

Գնած բոլոր արժէքներուդ մէջ, գիտցած եղի՛ր, կրթութիւնն է է՛ն թանկագինը, է՛ն անկորնչելին, և է՛ն անկապտելին: Բոլոր ծախքերդ սպառում՝ իսկ սա՛ է միայն ամբարում և շահագործում: Ա՛ն է որ օր մը նիւթական և բարոյական բարիքներու և օրհնութեան վերածուած, պիտի անձրեւէ կեանքիդ անդաստանին վըրայ, շահու, փառքի, սիրոյ և երջանկութեան առատ և անսպառ հունձք ապահովելով քեզ և քուկիներուդ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Սիրելի Մ'նո՛ղ ,

Կը կնքեմ խօսքերս : Քաջ գիտցի՛ր սակայն , վախճանը բանիս , վախճանը չէ՛ ընելիքիդ : Վերեւ յիշատակուած աւելի քան տասնեակ մը կանոնները , լրուած մը չեն պարտականութիւններուդ՝ որք անթիւ են և անհամար : Անոնցմէ փոքր և սիրուն փնջիկ մըն է որ յօրինած կը հերկայացնեմ քեզ այսօր , խորհելով որ , ասոնց լուրջ նկատառումը և ճշդապահ գործադրութիւնը , պիտի արթնցնեն ներսիդիդ , միւս բոլորը լրիւ զգալու և յայտնատեսելու զգացում և ոգի :

Հետեւի՛ր ուրեմն , սիրելի ծնո՛ղ , կանոնապրովս գծուած պարտականութիւններուդ շաւղին , և պիտի տեսնես թէ , ի՞նչպէս , մտգական ազդեցութեամբ իմն գողցես , պիտի պարզուին ուսանող-զաւկիդ առջև ձամբաներ դէպի լոյս , դէպի յոյս , դէպի գիտութիւն , դէպի յաջողութիւն , դէպի բարոյական աճում և հոգեկան շինութիւն :

Լոյսի , յոյսի , գիտութեան և յաջողութեան այդ ձամբաներու վախճանին , մաղթելով որ բիւր չնորհքներով պսակադրուած զաւկիդ առջև , արժանի ըլլանք , ե՛ս և դո՛ւն , զիրար ողջունել , լիովին ըմբռնուած և լըրջօրէն կատարուած պարտականութեան առթած անձառ գոհունակութեամբ՝

Մ'նամ միշտ աղօթարար

Հովիւդ անձնուէր

Հ. ՔՉՆՅ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

Հիմնադիր-Տեսուչ Հայկազնեան Կրթարանի



Յպագր, ԱՐԱՐ ԱՏԵՓԵՆԵԱՆ